ՔԱՂՎԱԾՔ

քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/11939/02/25

Վ Ճ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2026 թվականի հունվարի 05-ին Երևան քաղաքում

նախագահությամբ՝ դատավոր Ա. Դունամալյանի

քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության (գրանցման համար՝ 264.110.1412100, ՀՎՀՀ՝ 08285951) ընդդեմ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 22-ի N 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջներն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 22-ի N 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի որոշակի պահանջներն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/73» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2025թ. հոկտեմբերի 22-ի N 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 5-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրի «Դետեկտորի պիքսելի տեսակը՝ քառակուսի» և «Կոմբինացված 2D և տոմոսինթեզի ռեժիմ մեկ կոմպրեսիայի ժամանակ (սինթետիկ 2D), FDA հավաստագրված» պահանջները:

(...)

2. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

3. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**

ՎԱԿԵՐՊՎԱԾ Է
ԴԱՏԱՎՈՐԻ
ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ